

միշտ պատրկական ընտանիքներէ պիտի ընտրուէին: Կառավարութիւնը պատրիկներէն միայն կազմուած ինքնակոյտին ձեռքն էր: Հիւպատոսներն ու վերակոյտն ուրիշ բան չէին՝ բայց եթէ մարչութեան զործիքները, ժողովրդեան՝ այսինքն պատրիկներուն կամը զործադրող: Ասոր համար Հասարակապետութեան եօթն դարու միջոց՝ Հոռմ մնաց զեռ նախնի ոճով քաղաք մը: Նա աշխարհակալեց միջերկրական աշխարհն և շահագործեց զայն: Այն ատեն նա փայլեցաւ յաղթութիւնը տուող առաքիւթիւններով. կարգապահութեամբ, տուկունութեամբ, հայրենասիրութեամբ, Բայց Հոռմական Հասարակապետութիւնը չնմանեցաւ բնաւ մեր ռամկավարական հասարակապետութեանց, և պատերազմներու մէջ յաղթական հանդիսացող ժողովուրդը չտեսաւ երբէք որ այդ յաղթութիւններն իր կեանքի պայմանները բարոյքեն, վասն զի Հասարակապետութեան կառավարութիւնը կը գտնուէր ազնուապետութեան մը ձեռքը՝ որ Հոռմի տէր ըլլալով՝ աշխարհն իրեն օգտին միայն կը ծառայեցը: Ներ: Երբ ռամկավարութիւնն իր բաժինը պահանջեց՝ ծագեցաւ քաղաքական պատերազմներ, որոնց միջոց Հասարակապետութիւնը մթազնեցաւ: Առաջին երկու հիւպատոսներն եղան Բրտառու և Տարկու: Երես կողմատիւս:

Նորահաստատ Հասարակապետութիւնը առաջին ԳԱԻ կայն մեծամեծ վտանգներու ենթարկուեցաւ:

Ներսէն՝ Թագաւորականները, դուրսէն՝ արտաքին թշնամիները ներքին երկպառակութիւններէ օգուտ քաղելով՝ ոտքի ելան Հոռմի զօրութիւնը կործանելու համար: Տարկուինիոս Գոռողը՝ արքունի աստացումքն ետ պահանջելու համար՝ դեսպաններ ուղարկեց ի Հոռմ, որոնք սկսան նաև ձեռքի տակէ շատ մ'երիտասարդ ազնուականներ իրենց կողմն որաւ, որպէս զի Թագաւորութիւնը վերահաստատուն: Գիշեր մը դաւն երևան ելաւ, ու Բրտառուին հրա-

մանով՝ դաւանանները՝ որոնց մէջ կային նաև հիւպատոսին երկու որդիքը՝ մահուան դատապարտուեցան: Այս դէպքն այնչափ զրգոեց Հոռմայեցւոյ ատելութիւնը նոյն իսկ Տարկուինիոսի անուան դէմ, որ այնուհետև չուզեցին այս զգուշի անունն ունեցող մարդու մը քաղաքին մէջ մնալ, և Տարկուինիոս կողաւորնոս ստիպուեցաւ հրաժարիլ ու Հոռմէն հեռանալ:

Շարք.

Հ. Ս. Տէր-Մոսկովսկի



ԵՒԿԱԼՈՒՍԻՆ (Lune rousse)

Luna ruginosa — Լուսին Ժանգոտած
Borsa rugosa — Քսակ խորշոմած

... > < ...

ԻՍԱԼԱԿԱՆ այս յանգաւոր առածն՝ լաւ կը բացատրէ գիւղացիներուն մէջ տիրող երկիւղը, նկատմամբ այն երևոյթին որ կը պատահի Ապրիլ ամսոյ ամբողջ ընթացքին մէջ ըստ հին տումարին:

Գիւղացիները և պարտիզպանները կ'ըսեն թէ Լուսինը կարմրողակ երևոյթ կ'առնու երբ ծնաւ նի Ապրիլի մէջ (ըստ նոր տումարի), և ի վերջ Ապրիլի կամ Մայիսի սկիզբն կը լրանայ, կամ, ինչպէս կը բացատրեն ոմանք, Չատկէն վերջը ծնած Լուսինը կը կոչուի Դէկ Լուսին:

Եւ ահա այս տարի, նոր տումարի համար, 21 Ապրիլի յետ Զատիկ՝ Լուսին ծնունդն է և 7 Մայիսի ալ լրումն, որով այս տարի ալ Դէկուրակ Լուսին պիտի պատահի: Կիրակոսի գիւղացիները և այգեպանները մեծ կարեւորութիւն կու տան այս երևոյթին, մինչդեռ արևելքի ժողովուրդը չի կալուսնի ուրիշ գաղափար ունի՝ զոր լաւ կը բացատրէ կեսուրին և հարսին հետեւեալ խօսակցութիւնը.

Կեսուր. — Աչէ՛, աչէ՛, Լուսինը
Բռնելիկա է,
Սիրուն Գիւտսը՝
Չարբարձիկա է:
Հարս. — Լուսինը արուն
Է՛, քերարձիկի՛ս:
Կեսուր. — Հէնց կու ընի ամէն
Զատիկ Լուսնական:

Հոս յանդիմանը չնշանակեր Լուսին խաւալումը, վասն զի ամէն Զատիկն խաւարում չպա-

տաճիր, հետեաբար Հիկորակ Լուսնի վրայ է խօսակցութիւնը:

Ի՞նչ ազդեցութիւն կ'ընէ շիկալուսինը. — Այդպէսաները այն կարծիքն են առ հասարակ, թէ գիշերը երբ երկինքը պայծառ է և կը փայլի կարմրորակ Լուսինը, մասադայատունը, բոյսերուն տերևները, ծիրերը, պտկոճաքները կը սառնի, թէ և բարեխառնութիւնը գոյնէ մի քանի աս. տիեան վեր ըլլայ ($+4^0$ մինչև 8^0): Իսկ ընդ հակառակն եթէ երկինքը զոգ ըլլայ և ամպերով ծածկուած՝ Լուսնի ճառագայթները չհասնելով՝ սառիլը չի պատահիր: Ուստի պարտիզպանները չէն Լուսնի ճառագայթացումը արգիլելու համար ոչնչային նիւթեր կ'աշայեն, որոնք թանձր ծուխ մէկ արձակեն և առկախ կը մնան օդոյն մէջ, որով բոլոր չնախտիկ ու չի մեռնիր:

Ե՛րբ սկսած է շիկորակ Լուսնի դիտողութիւնը. — Այս երևոյթիս դիտողութիւնը պէտք է հին ըլլայ, բայց ոչ միշին դարէն առաջ, վասն զի նկատմամբ չէն Լուսնի յիշատակութիւն մը չի կայ Հռովմայեցոց մէջ, և կամ լաւ եւ ըսելու համար, տակաւին եւ ծանթութիւն չունիմ, բայց այսչափ որոշ կրնամ ըսել թէ գիտնականաց գիտութեան առարկայ եղած չէր: Կը պատմէ Արաբոյ թէ Լուգովիկոս Բ՛Ր Գաղղիոյ թաղաւորն ընդունելով մը մը աստեղագիտաց պատգամաւորութիւնը, յետ լսելու անոնց մաղթանքները և առաջարկութիւնները՝ թագաւորը իր կողմէն հարցում մը կ'ուղղէ անոնց՝ նկատմամբ շիկալուսնի, թէ ինչու՞ սա փնտաւկար է հունձքի: Առ այս, Լապլաս մեծ աստեղագետն, թէ՛ ժամանակին և թէ՛ ներկայիս, անխելք մը տալով ընկերներուն, որպէս զի գէթ մին պատասխանէ, և երբ ամենին ալ իրեն պէս բան մը չգիտնալով կը լռեն, կը պատասխանեն: Տէր արքայ, «չէն Լուսինը աստեղագիտութեան մէջ հայեցողութեան նիւթ չէ, և մենք ի վիճակի չենք գորացնելու վեհափառութեանդ հետաքրքրութիւնը»: Իսկ թագաւորը իրիկունը պատմեց ընտանեացը թէ ինչպէս չուարած վիճակի մէջ թողորցեր էր աստեղագէտները, և շատ խնդաց կ'ըսէ հեղինակը:

Թէպէտ գիտնականք տեղեութիւնն չունին կարմրորակ Լուսնով վրայ, սակայն գիտացիւնները գիտէին հնուց ի վեր, այնպէս որ Սեքստոս Ե. Բանաբաբարիս ժամանակ այդեան տարաժուած էր այս շիկալուսնով վախը, մինչև Մարթի գիտացիները՝ ուսիրց էր նաև քահանայապետն, խնդագիր մը գրեցին իրեն թախանձելով որ ազատէ գրիւնը չէն Լուսնի հարուածներէն, և շնորհէ իրենց որ տարին երկու հունձք ընեն: Իր պատասխանէ Բանաբաբարիսն. «Հիկորակ Լուսնէն ազատում չկայ, բայց հաւանութիւն կու տայ երկու հունձք ընելու, միայն թէ տարին 24 ա. միջ հաշուեն»:

Կարծիք ներկայ գիտնականաց շիկորակ Լուսնով վրայ. — Տեսնելով աստեղագէտք և բնագէտք՝ չէն Լուսնի բուսող վրայ ազդած աւերածները, և երևոյթին ըստ պարտիզպանաց ստոյգ գտնելով՝ իրենք ևս այս խնդիրն ուսումնասիրութեան նիւթ ըրին և ուզեցին գիտական պատճառ մը տալ, և յետ զանազան քննութեանց

հետեանքներ հանեցին՝ զորս թարգմանութեամբ առաջ կը բերեմ հոս:

Beschereille իւր բառարանի մէջ կ'ըսէ. «Բնական բանք բոլորովին ուրիշ պատճառներ կու տան այս երևոյթին, այն է պարզութիւն երկնից որ բոյսերը կը սառնեն»:

La Grande encyclopédie կ'ըսէ. «Հիկորակ Լուսնի համար լուրջ պատճառաբանութիւն չի կայ, եթէ մտածենք այն ժամանակին վրայ յուրում իրեն կը վերաբարին փաստներն, պիտի տեսնենք թէ կը վրիպին վասն զի մի և նոյն ժամանակ երկրիս ամէն կողմը ամէն տեսակ է, դանակ կը գտնուի և յիշատակուած փաստներն չեն պատահիր. դարձեալ պատճառ չկայ, Լուսնի նոյն երեսն է որ Արևին լուսաւորուած է, որով մը կը փնտէ այլ տեղ չնմանոր. Դիտելու, եւ որ ամէն զգայուն գործիքները՝ զոր դէպ ի Լուսնի ուղղած են՝ ամենափոքր ջերմութեան իսկ նշան տեսած չեն»:

C. Flammarion իւր համայնագիտական մեծ բառարանի մէջ կը գրէ. «Բայց կը խաբուին վերագրելով այս արդիւնքը Լուսնոյ վիստակայի ազդեցոյնը: Բոյսերուն անակնկալ սառիլը պարզապէս ամպերու բացալայութեան պէտք է վերագրել: Հոս Լուսնի բնաւ ազդեցութիւն չունի, նա պարզապէս նշանակ մ'է անաւարդ կընքին»:

Այս վկայութիւնները և ասոնց նման բազմաթիւ օրինակներ ներկայ գիտնականաց կարծիքը կը բացատրեն, որոնք բացարձակապէս կը մերժեն Լուսնոյ ազդեցութիւնը բուսող վրայ: Այսպէս Լուսինը իւր գերը կը խաղայ մի և նոյն Ապրիլ և Մայիս ամսոց մէջ, այլ ամէն տեղ և ամէն եղանակին՝ անկողն և նուազեցողով:

Ի՞նչպէս կը բացատրեն գիտնականք բոյսին մեռնիլ. — Գիտնականք քննեցին շիկալուսնի ժամանակ նորատունի բոյսերուն փնտաւելուն պատճառը, և այս եղաւ իրենց քննութեան հետևանքը. «Նորատունի բոյսերը կը փնտաւին վասն զի Ապրիլ և Մայիս ամիսներն անձրևային եղանակ ըլլալով, մերթ ընդ մերթ պայծառ օրեր և գիշերներ ալ կ'ունենանք: Երկիրս օրուան մէջ Արևն ընդունած ջերմութեանը՝ գիշերները կը կորսնցնէ եթէ պայծառ են գիշերները, և գիշերուան պայծառութեան պատշաճ է Լուսնի ներկայութիւնը, և այս ժամանակ ջերմաչափը կը նշանակէ 4 կամ 8 աստիճան կէտոսի գոյնէ վեր: Մատաղատունի բոյսերու մէջ գտնուած ջրային հիւթերը կը սառնի. և այս տարու կը պայթեցնէ բոյսին անօթները. և ապա Արևը իր ճառագայթներովը ճիւղերուն կու տայ կարմրորակ գոյն մը և այս տեղի կ'ունենայ բոյսին մեռնելէն մի քանի օր առաջ»:

Յորո՞ւմ կը կաշմանջ վերոյիշեալ բացատրութեանց վրիպակներն. — Առ այս նախ քննենք տառելու խնդիրն, վասն զի ասոր վրայ յենած գիտնականքը կը համարին թէ բոլոր կը մեռնի: Բոյսին մէջ գտնուող հիւթերն կրկին են. վե. բնական աւիշ և վայրէջ աւիշ: Ի՞նչ լաւ քննէ մէկը տեղը մը, շուշանք, պատութիւնն իսկոյն պիտի զգայ, և որովհետեւ օրոյ բարեխառնութիւնը չի-

կորսի Լուսին ժամանակ հազիւ մինչև 40 կ'իջնէ, ուստի օդը չկրնար պատճառ ըլլալ բոյսի աւիրին սատելուն, էնթազերեն գարձեալ թէ հիւթերը սատին. բայց արդեօք բոյսերուն անօթները ուրոց մէջ որ կը գտնուին հիւթերը՝ ստեղծող կըրնան պայթեցնել, Այս յայտնի է թէ անօթները ուղղակի յարաբերութեան մէջ չեն օդոյ հետ բացի բոյսին ներսի կողմը գտնուողն որ թաղանթով մը շրջապատեալ է, այնպէս որ էթէ մէկը դիտէ կոկոն մը որ օրուան շերտերեան սկիզբն ստեղծ է բացուելու, երեկոյ ցրտութիւնը վրայ հասնելով իսկոյն կը քաշուի կը գոցուի. ուստի բոյսը ինքն զիրեն կը պաշտպանէ սովորական պայմանաց տակ. Այս խորհրդածութեանէ վերջը՝ ստեղծու խնդիրը դիտենք. Ջրոյ յատկութիւնն է ստալի եթէ ի պայմանի ըլլայ, և շուրջը ստեղծով կ'ընդլայնի. էթէ ստաղ միջոց չստեղծ լայնալու, փորձը ցոյց տուած է թէ երկաթեայ զնդակն իսկ կը պայթեցնէ. բայց աւել զարուհակող անօթներուն երկու կողմերն լու տեղ են, որով էթէ աւելը ստեղծ, ընդլայնելու տեղ ունի. գարձեալ բոյսին անօթը երկաթի չնմանի որ երբ ցրտանայ կը կծկի, այլ ընդ հակառակն ամէն կողմէ տեղիք կու տայ, և էթէ ստաղ աւելը մղէ՝ կրնայ ընդլայնիլ, վասն զի ունի բազմաթիւ դատարկ միջոցներ և ինքն ալ առաձգական է. Ուստի քանի որ աւելները գոտ շուրջ չեն, և ստեղծու համար օդոյ բարեխառնութենէ շատ անելի ցած բարեխառնութիւն կը պահանջեն, քանի որ բոյսին անօթին մէջ գտնուող աւելը կամ օշորակը ենթադրելով իսկ թէ ստաղ ըլլալ, չկրնար պայթեցնել անօթը իւր առաձգական յատկութեան և երկու կողմը բաց ըլլալուն համար. և որովհետեւ տնկագործութեան և ցանելու ժամանակի արդիւնքները կը տարբերին ըստ Լուսնի անման կամ նուազման, հարկ է ուրեմն ուրիշ պատճառ փնտռել բոյսին փճանալուն:

Ինչէ՞ն կը մեծանի բոյսերը. — Բոյսին մեծնելու պատճառը հասկընալու համար պարելու պայմանները նախ պէտք է գիտնալ. Բոյսը իւր արմատին մագնզոններու միջոցաւ իւր սննդեան յարմար այլ և այլ նիւթեր կը ծծէ ջրով ի միասին. որ թաց հողոյն մէջ կը գտնուին, և այս գործողութիւնը կը կատարէ ներհոսմամբ. Այս ծծուած կը սկսի՝ երբ բոյսը ներքսպէս կընդառնութեան նշան տայ, որ գաղտնիք մ'է գիտութեան. անգամ որ որ կենդանութեան շարժումը՝ զգայ բոյսը, նյութնօթներու մէջ գտնուող օդը՝ խոնաւութենէն ծնած շերտութեամբ անօթներու ծակէն վեր բարձրանալ սկսած ժամանակը՝ յինքն կը ձգէ լուծեալ ուրիշ ջրոյ կաթիլներ, որոնք խոնաւ հողոյն մէջ կը գտնուին, և այս գործողութիւնը ծծուած կ'անուանեն. իսկ այս վեր բարձրացած կաթիլներն արմատով վերելած աւելի

հետ՝ փրփրական տարրալուծում առաջ կու գայ, ուսկից մաս մը թթուածնի՝ տերեւնորու բերնէն դուրս կ'ելլէ, և յինքն կ'ընդունի նոյն բերան. ներէն՝ բորակածինը՝ որ միանալով աւելի հետ՝ վայրէջ աւել կը կազմէ:

Բոյսը լուսոյ ներկայութեամբ թթուածնի դուրս կ'արձակէ, և բորակածնի կը ներշնչէ, բայց գրեթէ մոտ ժամանակ բորակածնի կ'արտաքսէ և թթուածնի կը ներշնչէ. ուստի թթուածինը բոյսին անհրաժեշտ է. Այս սկզբունքներն ունենալէն վերջը, դիտենք շիկալուսնի ժամանակ պատահած դէպքը:

Որուան մէջ արդէն թթուածնի կ'արտաշնչէ բոյսը, իսկ Լուսնոյ լրման ժամանակները երբ ամբողջ շաբաթ մը կը լուսաւորէ գիշերն իր լուսով՝ վերջապէս մինչև արշալոյս, բոյսը պիտի ստիպուի դարձեալ թթուածնի արտաշնչել, հետեաբար բոյսը թթուածնի ծծելու ժամանակ չունենալով և իւր մէջը գտնուող թթուածնին ալ անբաւական ըլլալով՝ հարկ է որ կրէ, և էթէ ցորտոյ ալ վրայ հասնի կը մեծնի. Բայց ոչ էթէ բուն ցորտն է որ վերջին հարուածը կու տայ՝ այլ թթուածնին անբաւականութիւնը, այնպէս որ էթէ լուսնի ներկայութիւնը չըլլար, ինչպէս է Դննդեան ժամանակները և ցորտը աւելի սաստիկ ընէր՝ բոյսը պիտի չմեծնէր. բոյսը ցորէ աւելի խորշակ կը կրէ. ուստի բոյսին մեծնելու բուն պատճառը շիկալուսնի ժամանակ՝ ոչ էթէ ցորտութիւնն է, այլ Լուսնի լոյսը որ անկարող կ'ընէ գոյուր թթուածնի ծծելու, և թթուածնին անբաւականութիւնը ի մահ կ'առաջնորդէ:

Լուսնի լոյսի ազդեցութիւնը ընդհանուր է, ինչպէս ձգողութեան ազդեցութիւնը մակերթաւ, ցութեան վրայ, և յիրաւի Լուսնոյ լոյսի ազդեցութիւնը մեծ դեր կը խաղայ բոյսերու վրայ, և պարտիզպանները մեծ կարևորութիւն կու տան. վասն զի փորձած են թէ՛ Լուսնոյ նուազման ժամանակ՝ այն է յետ լրման, ցանուած կամ տնկուած բոյսերն աւելի արդիւնք կու տան քան անման ժամանակ ցանուածները, այն է յետ ծննդեան Լուսնին. վասն զի այս ժամանակ տընկուածները, կ'ըսեն, թէ հուստի կ'երթան. Դոյնը պէս ծառ մը կարելի համար նոյն դիտողութիւնը կ'ընեն. Լուսնի նուազման ժամանակ կտրուած ծառերուն կրակը դիմացկուն կ'ըլլայ, մինչդեռ անման ժամանակ կտրուած ծառը շուտով մտի խիթի կը վերածուի. նոյնն է նաեւ պատուաստներու վրայ եղած ազդեցութիւնը:

Այս պատճաբանութիւններէն կը հետեի, թէ, Լուսինը ոչ միայն շիկալուսնի ժամանակ ազդեցութիւն կ'ընէ բոյսերու վրայ, այլ նաեւ ամէն ժամանակ և ամէն տեղ ըստ իւր անման և ըստ նուազման:

Հ. ԽԱՐԵՆ ՍԻՆՏԵՆՏ